

# ԵԿԵՂԵՑՈՒ ԾԻՍԱԿԱՆ ԿԵԱՆԲԸ ԵՒ ԵՕԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Մասն Գ.



*Թարգմանեց ու խմբագրեց՝*

ՄԱՇՏՈՑ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես զործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Մաշտոց Ասիտ Ղապարեան*

## ԳԼՈՒԽ Բ.

### ԶԱՏԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒՄԸ

Ծէսի շուրջ ուսուցումը նախեւառաջ պահանջում է խորհրդակատար տնտեսութեան խոր ըմբռնում. այս նիւթը քննեցինք Առաջին Գլխում: Այս Գլխում կը քննարկենք Եկեղեցու խորհուրդների ծիսակատարումը: Կը ներկայացնենք այն՝ ինչը որ ծիսական ականդոթների զանազանութեան մէջ ընդհանուր է Եօթ խորհուրդների ծիսակատարմանը: Ինչը վերաբերում է նրանցից իւրաքանչիւրին, կը ներկայացուի Երկրորդ Մասում: Խորհուրդների ծիսակատարման շուրջ այս Գլխում պարունակուած հիմնական ուսուցումները կը պատասխանեն այն առաջին հարցերին, որոնք հաւատացեալներին հետաքրքրում են այս նիւթի վերաբերեալ. ա) ո՞վ է ծիսակատարում, բ) ինչպէ՞ս ծիսակատարել, գ) ե՞րբ ծիսակատարել, դ) ո՞ւր ծիսակատարել:

#### ԿԱՏԱՐԵԼ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԷՍԸ

##### ա) Ո՞վ է ծիսակատարում

Ծէսը *ամբողջական Քրիստոսի* գործն է: Նրանք՝ ովքեր այստեղ կատարում են Ծէսը, նշաններից այն կողմ՝ արդէն իսկ երկնային Ծէսի մէջ են, ուր ծիսակատարութիւնը ամբողջովին հաղորդակցութիւն է եւ տօն:

##### Երկնային Ծէսի ծիսակատարները

Յովհաննէս Առաքեալի Յայտնութիւնը նախեւառաջ յայտնում է մեզ «մի գահ երկնքում, իսկ գահի վրայ Մէկը ... բազմած»<sup>1</sup>. «Տէրը»<sup>1</sup>: Ապա Գառը, «մորթուած եւ ոտքի կանգնած»<sup>2</sup>. խաչուած եւ յարութիւն առած Քրիստոսը, ճշմարիտ սրբատեղիի միակ Քահանայապետը<sup>3</sup>, նոյն ինքը «ընծայում է եւ ընծայում, նուիրում է եւ նուիրում»<sup>4</sup>: Եւ վերջում, «կենդանի ջրի գետը», որ բխում է «Աստծոյ եւ Գառան գահից»<sup>5</sup>. Սուրբ Հոգու այլաբանական ամենազեղեցիկ պատկերներից մէկը<sup>6</sup>:

Ի Քրիստոս բովանդակուած, Աստծոյ փառաբանման եւ Իր ծրագրերի կատարման ծառայութեանը մասնակցում են. ա) երկնային Զօրութիւնները<sup>7</sup>. բ) ամբողջ արարչութիւնը (Կենդանի շորս էակները). գ) Հին եւ Նոր Ուխտի ծառաները (Վասնշորս երեցները). դ) Աստծոյ նոր ժողովուրդը (Հարի-բխառասունշորս Հապարը)<sup>8</sup>. ե) յատկապէս

<sup>1</sup> Հմմտ. Յյտ 4, 2; Ես 6, 1; Եզկ 1, 26-28

<sup>2</sup> Յյտ 5, 6; Հմմտ. Յվհ 1, 29

<sup>3</sup> Հմմտ. Եբր 4, 14-15; 10, 19-21 ...

<sup>4</sup> Բիւզանդական Ծէս, *Anaphora Iohannis Chrysostomi*: F.E. Brightman, *Liturgies Eastern and Western*, Oxford 1896, p. 378.

<sup>5</sup> Յյտ 22, 1

<sup>6</sup> Հմմտ. Յվհ 4, 10-14; Յյտ 21, 6

<sup>7</sup> Հմմտ. Յյտ 4-5; Ես 6, 2-3

<sup>8</sup> Հմմտ. Յյտ 7, 1-8; 14, 1

մարտիրոսները, որոնք «մորթուեցին Աստուծոյ Խօսքի համար»<sup>1</sup>. գ) Աստուծոյ ամենասուրբ կոյս Մայրը (Աննա, Գառան Հարսը)<sup>2</sup>. է) եւ վերջում, «մի վիթխարի բազմութիւն», որը ոչ ոք չի կարող հաշուել, «բոլոր ազգերից, ցեղերից, ժողովուրդներից ու լեզուներից»<sup>3</sup>:

Այս յաւիտենական Ծէսին է, որ Հոգին եւ Եկեղեցին մեզ մասնակից են դարձնում, երբ խորհուրդների միջոցով ծիսակատարում ենք Փրկութեան Խորհուրդը:

## Խորհրդակատար Ծէսի ծիսակատարները

Ամբողջ Եկեղեցին՝ իր Գլխին միացած Քրիստոսի Մարմինն է, որ ծիսակատարում է: Ծիսական արարքները անձնական են, բայց արարողութիւնները ամբողջ Եկեղեցուն են, որը «խորհուրդն է միութեան»: Այսպիսով, այդ արարքները պատկանում են Եկեղեցու ամբողջ Մարմնին, բացայայտում են այն եւ լռելեայն հուշակում: Առանձին անդամներն, ապա, մասնակցում են զանազան կերպերով, ըստ վիճակների, պաշտօնների եւ տուեալ դէպքում իրենց բերած մասնակցութեամբ: Այս իսկ պատճառով, ամէն անգամ՝ որ ծիսակատարութիւնները թոյլատրում են, իւրաքանչիւրի առանձնայատկութիւնների համաձայն, խմբային ծիսակատարում հաւատացեալների ներկայութեամբ եւ գործուն մասնակցութեամբ, այս վերջինը հնարաւորութիւնների սահմաններում աւելի նախընտրելի է՝ քան անձնական, գրեթէ սեփականացուած կատարումը:

Ծիսակատար հաւաքը մկրտուածների հասարակութիւնն է, որոնք Սուրբ Հոգուց ծնուելով եւ օծուելով՝ ընծայում են կազմելու հոգեւոր բնակատեղի եւ սուրբ քահանայութիւն, որպէս հոգեւոր գոհեր մատուցել կարողանալու համար քրիստոնեայի մարդկային բոլոր գործերը: Այս Համընդհանուր Հաւանայութիւնը նոյն ինքն Քրիստոսինն է, միակ Քահանայինը, հաղորդակցուած՝ իր բոլոր անդամներին: Այս պատճառով, Եկեղեցին վառ կերպով փափաքում է, որ բոլոր հաւատացեալները առաջնորդուեն դէպի այն կատարեալ, գիտակից ու գործուն մասնակցութիւնը ծիսական արարողութիւններին, որ պահանջում է Ծէսի բնութեամբ ու էութեամբ իսկ, եւ որին քրիստոնեայ ժողովուրդը, «ընտրեալ տոհմը, թագաւորական քահանայութիւնը, սուրբ ազգը, ձեռքբերուած ժողովուրդը»<sup>4</sup> իրաւունքն ու պարտականութիւնն ունի Մկրտութեան գործութեամբ:

Բայց «բոլոր անդամները նոյն պաշտօնը չունեն»<sup>5</sup>: Ոմանք Աստուծուց կանչուած են, Եկեղեցուց եւ Եկեղեցու մէջ, հասարակութեան համար խորհրդակատար ծառայութեանը: Այս պաշտօնեաները ընծայում են Զեռնադրութեան խորհրդի միջոցով, որի շնորհիւ՝ Սուրբ Հոգին նրանց իրաւասու է դարձնում ծիսական արարողութիւններում գործելու յանուն Քրիստոս Գլխի, Եկեղեցու բոլոր անդամների ծառայութեան համար: Իսկ քանի որ Եկեղեցու խորհուրդը լիովին բացայայտում է Գոհաբանական Պատարագի մէջ, յատկապէս այս խորհրդի մատուցմամբ է բացայայտում եպիսկոպոսի եւ իր հետ հաղորդակցութեամբ՝ քահանաների ու սարկաւազների պաշտօնը:

Հաւատացեալների համընդհանուր քահանայութեան ծառայութիւնները կատարելու համար կան նաեւ ուրիշ պաշտօններ, որոնք սակայն չեն ընդունւում Զեռնադրութեան խորհրդով, այլ որոշուած են եպիսկոպոսների կողմից, ծիսական աւանդոյթների ու հովուական կարիքների համաձայն: Սպասաւորները,

<sup>1</sup> Յյտ 6, 9

<sup>2</sup> Հմմտ. Յյտ 12; 21, 9

<sup>3</sup> Յյտ 7, 9

<sup>4</sup> 1Պտ 2, 9; Հմմտ. 1Պտ 2, 4-5

<sup>5</sup> Հռմ 12, 4

ընթերցողները եւ դասի բոլոր անդամները նոյնպէս իրապէս մասնակցում են Մէսի կատարմանը:

Այսպիսով, խորհուրդների ծիսակատարման ընթացքում ամբողջ հասարակութիւնը **Ծիսակատար է**, իւրաքանչիւրն ըստ իր յատուկ պաշտօնի, բայց Հոգու միութեան մէջ, որ գործում է բոլորի միջոցով: Ծիսակատարութիւններում բոլորը, ձեռնադրուած պաշտօնեայ կամ ոչ, վարելով իրենց պաշտօնները, պէտք է կատարեն միայն այն բաները եւ բոլոր այն բաները՝ որոնք գտնուում են իրենց իրաւասութեան սահմաններում, ծիսական արարողութիւնների եւ կանոնների համաձայն<sup>1</sup>:

## բ) Ինչպի՞ս ծիսակատարել

### Նշաններն ու այլաբանական պատկերները

Խորհուրդների ծիսակատարումը հիւսուած է նշաններով ու այլաբանական պատկերներով: Փրկութեան աստուածային մանկավարժութեան համաձայն, նրանց իմաստը գտնուում է արարչագործութեան եւ մարդկային մշակոյթի մէջ, ճշտուում է Հին Ուխտի իրադարձութիւններով եւ լիովին յայտնուում է ընդմէջ Քրիստոսի Անձի ու գործունէութեան:

**Մարդկանց աշխարհի նշանները:** Նշաններն ու այլաբանական պատկերները մարդու կեանքում գրաւում են կարեւորագոյն մի տեղ: Քանի որ միաժամանակ մարմնեղէն ու հոգեղէն արարած է, մարդն արտայայտում եւ ընկալում է հոգեւոր իրականութիւնները նիւթական նշաններով ու պատկերներով: Քանի որ ընկերային արարած է, մարդը կարիքն ունի նշանների ու պատկերների, հաղորդակցուելու համար ուրիշների հետ շնորհիւ լեզուի, շարժուձեւերի, արարքների: Նոյնը տեղի է ունենում Աստուծոյ հետ ունեցած իր յարաբերութիւններում:

Աստուած մարդուն խօսում է ընդմէջ տեսանելի արարչութեան: Նիւթական տիեզերքը ներկայանում է մարդու բանականութեանը, որպէսզի մարդը նրանում կարգայ իր Արարչի հետքերը<sup>2</sup>: Լոյսը եւ գիշերը, քամին եւ կրակը, ջուրը եւ հողը, ծառը եւ պտուղները խօսում են Աստուծոյ մասին, հասկացնում են միաժամանակ Նրա մեծութիւնն ու մօտիկութիւնը:

Որպէս արարածներ, այս զգալի իրականութիւնները կարող են դառնալ Աստուծոյ գործունէութեան բացայայտման վայրը, որ սրբացնում է մարդուն, եւ մարդկանց գործունէութիւնը, որոնք Աստուծուն մատուցում են իրենց պաշտամունքը: Նոյն կերպ է տեղի ունենում մարդու ընկերային կեանքի նշանների ու պատկերների պարագայում. լուսլ եւ օձել, բեկանել հացը եւ կիսել գաւաթը, կարող են արտայայտել Աստուծոյ սրբարար ներկայութիւնը եւ իր Արարչի հանդէպ մարդու երախտագիտութիւնը:

Մարդկութեան բոլոր մեծ կրօնները վկայում են, յաճախ տպաւորիչ կերպով, կրօնական ծիսակատարութիւնների այս տիեզերական եւ այլաբանական իմաստին: Եկեղեցու Մէսը ընդունում, ամբողջացնում եւ սրբացնում է արարչութեան եւ մարդկային մշակոյթի տարրերը, նրանց տալով շնորհի եւ Յիսուս Քրիստոսի մէջ նոր արարչութեան պատկերներ լինելու արժանապատուութիւնը:

**Ուխտի նշանները:** Ընտրեալ ժողովուրդը Աստուծոյ ստանում է տարբերակիչ նշաններ ու այլաբանական պատկերներ, որոնք բնորոշում են իր ծիսական կեանքը. այլեւս արարչութեան մէջ պարբերաբար տեղի ունեցող երեւոյթների եւ ընկերային

<sup>1</sup> Այս նիւթը առաւել կը խորացուի սոյն հատորի երկրորդ մասում, Ձեռնադրութեան խորհրդին յատկացուած բաժնում:

<sup>2</sup> Հմմտ. Իմա 13, 1; Հւմ 1, 19-20; Գրծ 14, 17

կեանքի իրադարձութիւնների տօնախմբումներ չեն պարզապէս, այլ նշաններն են Ուխտի, պատկերներն են այն մեծագործութիւնների, որոնք Աստուած կատարեց Իր ժողովրդի համար: Հին Ուխտի ծիսական այս նշաններից կարող են յիշատակուել թլփատումը, թագաւորների ու քահանաների օծումն ու ընծայումը, ձեռնադրութիւնները, զոհերը, եւ յատկապէս՝ Զատիկը: Այս նշանների մէջ Եկեղեցին ճանաչում է Նոր Ուխտի խորհուրդների նախապատկերումը:

**Քրիստոսից վերջո՛ւս նշանները:** Իր քարոզութիւնների ընթացքում, Յիսուս յաճախ էր գործածում արարչութիւնից վերցուած նշաններ, հասկացնելու համար Աստուծոյ Արքայութեան խորհուրդները<sup>1</sup>: Նիւթական նշաններով կամ պատկերաւոր արարքներով կատարում էր բժշկումներ եւ ակնարկում էր Իր ուսուցումների կարեւորութեանը<sup>2</sup>: Նոր իմաստ էր տալիս Հին Ուխտի նշաններին ու իրադարձութիւններին, յատկապէս Ելքին ու Զատիկին<sup>3</sup>, որովհետեւ ճիշտ Ինքն է այդ բոլորի իմաստը:

**Խորհուրդների ծիսական նշանները:** Հոգեգալուստից յետոյ, Իր Եկեղեցու ծիսական նշանների միջոցով է՝ որ Սուրբ Հոգին ի կատար է ածում սրբացման գործը: Եկեղեցու խորհուրդները չեն վերացնում, այլ մաքրագործում ու ամբողջացնում են արարչութեան եւ ընկերային կեանքի նշանների ու պատկերների հարստութիւնը: Ինչպէս նաեւ կատարելութիւն են տալիս Հին Ուխտի նշաններին, իմաստաւորում եւ ներկայ են դարձնում Քրիստոսի կողմից կատարուած փրկագործութիւնը, նախապատկերում եւ կանխում են երկնային փառքը:

Եկեղեցու աստուածաբանութիւնը Մէսր ներկայացնում է որպէս մի իրականութիւն, որում մարդու սրբացումը իմաստաւորում է **«Բաւրի նշանների միջոցով եւ իրագործում է նրանց յատուկ եղանակով:** Խորհուրդների ծիսական նշանները բազմազան են. նշան է խօսքը, նշան է հաւատացեալների հաւաքը, նշան են ծիսական հանդերձներն ու սպասները, նշան են ծիսական վայրերն ու առարկաները, արարողութիւնները, արարքները, կեցուածքը, նշան են յատկապէս եօթ խորհուրդներն ու խորհրդանմանները, ծիսական ժամանակները եւ ժամերգութիւնները: Այդ նշանները քմահաճոյ չեն, ո՛չ էլ պատահական, չպէտք է եւ չեն կարող հասկացուել որպէս զուտ արտաքին արարք, երեւոյթ, այլ որպէս ներքին մի իրականութեան արտայայտութիւն, մարմնացում, խորհրդանշան: Ինչպէս բացատրում է Սբ. Օգոստինոսը. «Ա՛յլ բան է այն՝ ինչ տեսնում է, ա՛յլ բան է այն՝ ինչ հարկ է հասկանալ»<sup>4</sup>: Խորհրդակատարութիւնների ծիսական նշանները կամուրջ են տեսանելի ու զգալի եւ անտեսանելի ու հոգեւոր աշխարհների միջեւ:

Խորհուրդների ծիսական նշանները, ինչպիսիք էլ որ լինեն, միշտ ունեն իրականութեան, դէպքի, իրադարձութեան, գործողութեան, ներգործութեան արժէք: Մի ներգործութեան, որն ունի երկու ուղղութիւն. առաջին՝ **Քացայայտել ծածուկ իրականութիւնը եւ մեզ հաղորդակցութեան մէջ դնել նրա հետ. երկրորդ՝ խօսակցել թաքցնել իրականութիւնը այնպէս՝ որ նրա հետ ունեցած մեր հաղորդակցութիւնը մնայ սահմանափակ, անկատար, եւ մեզնում շարունակի տեւել առաւել խոր ծանօթութեան եւ առաւել մտերիմ միութեան փափաքը:** Մէկ խօսքով, ծիսական նշանները **Քացայայտում են՝ խօսակցելով:**

Նշանների գոյութեան իմաստը կայանում է նրանում, որ Աստուած, մարդուն ընդառաջ գալով, փրկելու համար մարդուն, կամեցաւ յայտնուել մարդկային բնութեանը յարմար եղանակով: Մարդը, որ բաղկացած է հոգու եւ մարմնի

<sup>1</sup> Հմմտ. Ղկմ 8, 10

<sup>2</sup> Հմմտ. Յվհ 9, 6; Մրկ 7, 33-35; 8, 22-25

<sup>3</sup> Հմմտ. Ղկմ 9, 31; 22, 7-20

<sup>4</sup> Սբ. Օգոստինոս, *Sermo* 272.

միութիւնից, ճանաչելու համար, իրօք, կարիքն ունի մեկնելու այն ամէնից՝ որ ընկալում է զգայարաններով, զգալի կերպով<sup>1</sup>: Աստուած, այս իսկ պատճառով, մարդկանց հետ հաղորդակցութեան մէջ է մտնում տեսանելի եւ զգալի աշխարհի միջոցով. գործածում է խօսքեր, անձինք եւ դէպքեր, որոնց միջոցով յայտնում է: Յիշենք, օրինակի համար, Եգիպտոսից Ելքի զանազան դէպքերն ու նշանները որպէս փրկագործութեան զանազան տեսանկիւնների յայտնութիւն, եւ թէ ինչպէս է Եկեղեցին դրանք գործածում Մկրտութեան ծիսակատարման ընթացքում: Յիշենք նաեւ՝ թէ ինչպէս է Խաչը յայտնում Աստուծոյ սէրն ու արդարութիւնը. այս իրականութիւնը մեր Հայ Եկեղեցու Սուրբ Հայրապետները ըմբռնել էին այնքան խոր կերպով, որ հայ ծիսական լեզուում **Խաչ** եւ **Նշան** եզրերը ներկայանում են որպէս միմեանց հոմանիշ:

Այս ամէնը ընդգծում է՝ թէ ինչպէս Աստուած կամեցել է յատուկ նախընտրութիւն տալ պատկերներին եւ նշաններին, որովհետեւ վերջիններս ծառայում են ցոյց տալու յայտնուած իրականութիւնների վերանցականութիւնը: Այս պատճառով, Եկեղեցին նոյնպէս իր ծիսակատարութիւններում հետեւում է այս **աստուածային մանկավարժութեանը**, աստուածաշնչեան խորհրդանշանները թարգմանելով ծիսական արարողութիւնների մէջ, որոնք ներկայ եւ տեսանելի են դարձնում փրկութեան ծածուկ իրականութիւնը:

Խորհուրդների ծիսական նշանների հիմքը Քրիստոս Ինքն է. Հօր կենդանի նշանը, Նրա պատկերն ու խորհուրդը (sacramento): Անտեսանելի Խօսքը մարդացաւ յանձինս Յիսուսի եւ մենք կարողացանք տեսնել Նրա փառքը: Քրիստոսի մարմինը **Քաջայայտում է, խօշարկելով**, իր աստուածային անտեսանելի Անձը: Հաստատում է Սուրբ Կիւրեղ Աղեքսանդրացին. «Փրկչի մարմինը համագործակցեց աստուածային գործերին, եւ Խօսքի հետ նրա միութիւնը դարձնում էր իրեն կենարար: Ինչպէս հրաշէկ երկաթն է կրակից ստանում իր ջերմութիւնն ու լոյսը, այնպէս էլ Յիսուսի մարմինը աստուածութիւնից ստանում է մի զօրութիւն, որ բուժում է: Այն պահից սկսած, երբ Խօսքը եկաւ բնակուելու այդ մարմնում, Նա մասնակից է դարձնում նրան իր կենարար գործունէութեանը եւ նրան նոյնպէս դարձնում է կենարար, ինչպէս որ Ինքը կենարար է ըստ իր բնութեան»: Հետեւաբար, արտաքին նշանները **Քաջայայտում են, խօշարկելով**, մարդուն փրկելու աստուածային կամքը:

Իր յարութիւնից եւ համբարձումից յետոյ, Քրիստոս նման եղանակով շարունակում է իր մարմնացումը, զգալի ներկայութիւնը, ծիսական նշաններում, որոնց մէջ ներկայ է եւ ազդում է Քրիստոսի մարմնի փրկարար միեւնոյն ներգործութիւնը: Հացի, գինու, ջրի, ձէթի, ձեռնադրութեան, օծման, ջրի մէջ ընկղման եւ այլ նշանները իմաստաւորում եւ արտայայտում են փրկագործութիւնը, որը մէկ անգամ կատարուեց Քրիստոսի կողմից եւ այժմ, դարերի ընթացքում, շարունակում է ծիսական խորհրդակատարութիւններում:

Ծիսական նշանները ամբողջովին կախումնաւոր են Քրիստոսի եւ Եկեղեցու կողմից կատարուած ազատ ընտրութիւնից: Այս իսկ պատճառով, հասկանալու համար ծիսական նշանները, հարկաւոր է ճանաչել դիտաւորութիւնը, որից մղուած՝ Քրիստոս եւ Եկեղեցին ներմուծեցին դրանք:

Ընդհանուր կերպով կարելի է հաստատել՝ որ ընտրութեան համար հաշուի են առնուել նիւթերի բնական արժէքները, աւելացնելով մի նոր կրօնական պարունակութիւն: Զուրը, օրինակի համար, որ բնական խորհրդանշանն է մարմնի մաքրութեան, Քրիստոսի կողմից վերածուել է հոգու մաքրագործման ծիսական նշանի: Հացը, որ Փիղիքական սնունդն է, դարձել է հոգու սնուցման խորհրդական նշանը: Մկրտութեան վերաբերեալ այսպէս է արտայայտուում Տերտուղիանոսը. «Օծումը կատարուում է մարմնի վրայ, բայց հոգին է օգտուում: Մկրտութեան նիւթական արարքը, որ ընկղմում է մեզ ջրի մէջ, որպէս հոգեւոր արդիւնք ունի մեզ մեր մեղքերից ազատումը»: Մի ուրիշ տեղ էլ աւելացնում է. «Մարմինը լուացւում է,

<sup>1</sup> Հմմտ. Իմա 13, 1-10; Սղմ 8; Ես 45, 18; Հռմ 1, 20

որպէսզի հոգին մաքրագործուի: Մարմինը օժուում է, որպէսզի հոգին ընծայուի: Մարմինը ստանում է խաչի նշանը, որպէսզի հոգին ստանայ նրա գորութիւնը: Մարմինը ապաստանում է ձեռնադրութեան շուքի ներքոյ, որպէսզի հոգին լուսաւորուի Սուրբ Հոգուց: Մարմինը սնուցւում է Տիրոջ մարմնով եւ արեամբ, որպէսզի հոգին լցուի Աստծով»:

Հետեւաբար, ըմբռնելու համար Քրիստոսի կողմից հաստատուած նշանների իմաստը (Մկրտութիւն, Հաղորդութիւն, եւ այլն), հարկաւոր է ուսումնասիրել Քրիստոսի կեանքը: Ըմբռնելու համար, մինչդեռ, Եկեղեցու կողմից հաստատուած նշանների իմաստը, հարկաւոր է դիմել այն աղօթքներին, որոնք սովորաբար նախորդում եւ ընկերակցում են նոյն ինքն նշանների օրհնութեան արարողութիւնները: Եթէ, յանկարծ, սրանք բաւական չեն, պէտք է դիմել Եկեղեցու ծիսական պատմութեանը:

Քանի որ հաստատուել են Քրիստոսի եւ Եկեղեցու կողմից, ծիսական նշանները ունեն ամբողջովին իրենց յատուկ արդիւնաւէտութիւն, որը սակայն տարբերակւում է երկու եղանակի, ըստ այնմ՝ թէ խօսքը վերաբերւում է Քրիստոսի կողմից հաստատուած նշաններին (եօթ խորհուրդները), որոնք ազդում են ի **Գործոյ անորի Գործելոյ** (ex opere operato), թէ Եկեղեցու կողմից հաստատուած նշաններին (խորհրդանմանները, զանազան արարողութիւնները, աղօթքները եւ այլն), որոնք ազդում են ի **Գործոյ անորի Գործողին՝ Եկեղեցոյ** (ex opere operantis Ecclesiae): Ներկայ ունենալով այս տարբերակումը, ծիսական նշաններին յատուկ արդիւնաւէտութիւնը կայանում է ներգործելու մէջ այն՝ ինչը որ իմաստաւորում են, այսինքն՝ Եկեղեցու ամբողջութեան սրբագործումը եւ Աստծուն մատուցուած պաշտամունքը:

Եկեղեցու սրբագործումը Աստծոյ գործն է Եկեղեցու նկատմամբ. պաշտամունքը՝ Եկեղեցունը Աստծոյ նկատմամբ: Հետեւաբար, ծիսական նշանների քօղի ներքոյ, Աստուած իջնում է դէպի մարդը եւ մարդը բարձրանում է դէպի Աստուած:

## Խօսքեր ու արարքներ

Խորհրդակատար որեւէ ծիսակատարութիւն մի հանդիպում է Աստծոյ որդիների եւ իրենց Հօր միջեւ, Քրիստոս Յիսուսով եւ Սուրբ Հոգիով, եւ այդ հանդիպումն արտայայտւում է որպէս երկխօսութիւն, ընդմէջ արարքների ու խօսքերի: Թէեւ պատկերաւոր արարքներն արդէն իսկ մի տեսակ խօսակցութիւն են, այնուամենայնիւ անհրաժեշտ է՝ որ Աստծոյ Խօսքը եւ հաւատքի պատասխանը ընկերանան եւ կեանք տան այդ արարքներին, որպէսզի Արքայութեան սերմը պտղաբերի ընտիր Հոգի մէջ: Ծիսական արարողութիւնները իմաստաւորում են այն՝ ինչը որ Աստծոյ Խօսքը արտայայտում է. Աստծոյ ձրի նախաձեռնութիւնը եւ, միաժամանակ, Իր ժողովրդի հաւատքի պատասխանը:

**Խօսքի Պաշտամունքը** խորհուրդների ծիսակատարման ամբողջացուցիչ մասերից մէկն է: Մնուցելու համար հաւատացեալների հաւատքը, հարկ է արժէքաւորել Աստծոյ Խօսքի նշանները. Խօսքի գիրքը (խորհրդատետր կամ Աւետարան), մեծարանքը՝ որի առարկան է (Թափօր, խնկարկում, մոմեղէններ), տեղը՝ որտեղից հռչակւում է (ամբիոն կամ բեմ), Խօսքի լսելի եւ յստակ ընթերցումը, պաշտօնեայի բացատրական քարոզը, որ հետեւում է ընթերցմանը, հաւաքուածների պատասխանները (բացականչութիւններ, խորհրդածութեան Սաղմոսներ, հաւատքի դաւանութիւնը, եւ այլն):

Լինելով անբաժանելի, որպէս նշաններ եւ ուսուցում, խօսքերը եւ արարքները այդպիսին են նաեւ որովհետեւ իրագործում են այն՝ ինչը որ իմաստաւորում են: Սուրբ Հոգին չի գոհանում հաւատքի միջոցով Աստծոյ Խօսքը պարզապէս հասկացնելով. խորհուրդների միջոցով նա նաեւ իրագործում է Խօսքով հռչակուած Աստծոյ մեծագործութիւնները. ներկայ է դարձնում եւ հաղորդակցում է Հօր գործը, որն ի կատար ածուեց սիրեցեալ Որդու կողմից:

## Երգ եւ երաժշտութիւն

Եկեղեցու երաժշտական ավանդույթը անսպառելի արժէք ունեցող մի գանձ է, որ գերազանցում է արուեստի միւս արտայայտութիւններին, յատկապէս այն պատճառով՝ որ խօսքերին միացած սրբազան երաժշտութիւնը անհրաժեշտ եւ ամբողջացուցիչ մասն է հանդիսաւոր ծիսակատարումների: Ներշնչուած Սաղմոսների կազմութիւնն ու եղանակումը, յաճախ երաժշտական գործիքների ընկերակցութեամբ, արդէն իսկ սերտօրէն կապուած էին Հին Ուխտի ծիսակատարումներին: Եկեղեցին շարունակում եւ զարգացնում է այս ավանդույթը. Պաշտամունք մատուցէք «սաղմոսներով, օրհներգներով, հոգեւոր երգերով, երգելով ու սաղմոսելով Տիրոջը ձեր ամբողջ սրտով»<sup>1</sup>: «Ով երգում է, աղօթում է կրկնակի անգամ»<sup>2</sup>:

Երգն ու երաժշտութիւնը նշաններ լինելու իրենց պաշտօնը կատարում են այնքան ակեւի արտայայտիչ կերպով, որքան ակեւի սերտօրէն են միանում ծիսակատարութիւններին, ըստ երեք գլխաւոր չափանիշների. աղօթքի արտայայտչական գեղեցկութիւնը, ժողովրդի միահոգի մասնակցութիւնը նախատեսուած պահերին եւ ծիսակատարութիւնների հանդիսաւոր բնոյթը: Այսպիսով, երգերը մասնակցում են ծիսական խօսքերի ու արարքների նպատակին. Աստուծոյ փառքը եւ հաւատացեալների սրբութիւնը:

«Որքան արցունքներ հեղեցի ի լուր օրհնութիւններիդ ու երգերիդ, որ քաղցրօրէն հնչում էին Եկեղեցուդ ներսում: Բուռն ու սաստիկ յուզում. այդ դայլայլները հեղում էին ականջներիս մէջ եւ սրտիցս ներս թորմամբ կաթեցնում էին ճշմարտութիւնը, արծարծելով այնտեղ բարեպաշտութեան ջերմ զգացումներ: Արցունքները, որ հոսում էին, բարի ազդեցութիւն էին թողնում հոգուս վրայ»<sup>3</sup>:

Նշանների ներդաշնակութիւնը (երգ, երաժշտութիւն, խօսքեր եւ արարքներ) այնքան ակեւի նշանակալից է ու պտղաւատ, որքան ակեւի է արտայայտում Աստուծոյ ծիսակատար ժողովրդին յատուկ «շակո-թային Հարստո-թեան» համաձայն: Այս իսկ պատճառով, հետեւողականութեամբ պէտք է քաջալերել կրօնական ժողովրդական երաժշտութիւնը, այնպէս՝ որ բարեպաշտ եւ սրբազան հրահանգների ժամանակ, ինչպէս նաեւ ծիսական արարողութիւններում, Եկեղեցու կանոնների համաձայն, լսելի լինի նաեւ հաւատացեալների ձայնը: Բայց այնուամենայնիւ, սրբազան երաժշտութեանը յատկացուած բառերը պէտք է համապատասխանեն Եկեղեցու ուղղափառ վարդապետութեանը, ակեւին՝ նախընտրութիւնը պէտք է տալ Աստուածաշնչից եւ ծիսական աղբիւրներից քաղուած հատուածներին:

Թէեւ ծիսակատարութիւնների ժամանակ կարելի է գործածել երաժշտական որեւէ գործիք – լինի լարային, փողային կամ ա՛յլ տեսակի – այնուամենայնիւ՝ Հայ Եկեղեցում պէտք է մշտապէս մեծ յարգանք վայելի փողային երգեհոնը, երաժշտական այլեւս ավանդական դարձած այս գործիքը, որի ձայնը ի վիճակի է հանդիսաւորութիւն ներշնչելու Եկեղեցու արարողութիւններին եւ բարձրացնելու հոգիներն առ Աստուած եւ դէպի երկնային իրականութիւնները: Այս իսկ պատճառով, երգեհոնահարը, իր ծիսական պաշտօնին գիտակից, պէտք է տիրապետի ծիսական գիտելիքներին, հոգեւոր պատրաստութեան եւ ներքին հարստութեան, կարողանալու համար ծառայել ո՛չ իր անձին, այլ ծիսական հաւաքին, որի միութեանը պէտք է նպաստի իր պաշտօնի ուղիղ ու անվրէպ կատարմամբ:

<sup>1</sup> Եփս 5, 19; Հմմտ. Կղս 3, 16-17

<sup>2</sup> Սբ. Օգոստինոս, *Enarratio in Psalmum* 72, 1.

<sup>3</sup> Սբ. Օգոստինոս, *Confessiones*, 9, 6, 14.

## Երկրպագութիւն կամ Պաշտամունք

Երկրպագութիւնը կրօնի առաքինութեան գլխաւոր արարքն է: Աստուծն երկրպագել կամ պաշտել՝ նշանակում է ճանաչել Նրան որպէս Աստուած, որպէս Արարիչ եւ Փրկիչ, որպէս ամէն ինչի Տէր: «Միմիայն քո Տէր Աստծոյ առաջ կ'երկրպագես, միմիայն Նրան կը պաշտես»<sup>1</sup>, ասում է Յիսուս, մէջբերելով Երկրորդումն Օրինաց 6, 13 հատուածը: Աստծոյ բացարձակ էութիւնը ճանաչելուց բացի, Աստծուն երկրպագել՝ նշանակում է ընդունել, բացարձակ յարգանքի ու ենթարկումի ոգիով, արարածի ոչնչութիւնը, որը գոյութիւն ունի միմիայն Աստծոյ ստեղծարար ներգործութեան գորութեամբ:

Աստծուն երկրպագել՝ նշանակում է փառաբանել եւ մեծարել Նրան, խոնարհեցնելով սեփական անձը, ինչպէս Մարիամը Մեծացուցէում, երախտագիտութեամբ խոստովանելով՝ որ Նա մեծագործութիւններ է կատարում եւ որ սուրբ է Իր Անունը<sup>2</sup>: Միակ Աստծոյ երկրպագութիւնը մարդուն ազատում է ինքն իր վրայ կըռելուց, ինքն իր մէջ փակուելուց, մեղքի ստրկութիւնից եւ աշխարհի կռապաշտութիւնից:

Մէկ խօսքով, երկրպագութիւնը մարդու հիմնական դիրքորոշումներից մէկն է, որով ճանաչում է իրեն արարած՝ Արարիչ Աստծոյ դիմաց: Երկրպագութիւնը ընդգծում է Տիրոջ մեծութիւնը, որ ստեղծել է մեզ<sup>3</sup>, եւ Փրկչի ամենակարողութիւնը, որ ազատում է մեզ չարիքից: Հոգու տարածումն է «փառքի Թագաւորի»<sup>4</sup> դիմաց եւ յարգանքով լի լուծութիւնն է Աստծոյ առաջ, որը «միշտ մեզնից մեծ է»<sup>5</sup>: Երիցս սուրբ Աստծոյ երկրպագութիւնը ներշնչում է մեզ խոնարհութիւն, եւ վստահութիւն՝ մեր աղօթքներին:

Հին Կտակարանում բազում անգամներ է յիշեցւում, որ երկրպագութեան պաշտամունքը ընծայւում է միմիայն միակ Աստծուն: Այս իսկ պատճառով, Սաղմոսերգուն ասում է, որ միմիայն Աստծոյ առաջ պիտի «երկրպագեն ժողովուրդների բոլոր ընտանիքները»<sup>6</sup>: «Եկէք, երկրպագութեամբ պաշտենք, ծունկի գանք Տիրոջ առաջ, որ ստեղծեց մեզ»<sup>7</sup>: «Ընծաներ բերէք եւ մտէք Նրա խորաններից ներս, սրբազան հանդերձներով երկրպագեցէք Տիրոջը»<sup>8</sup>: «Մեծարեցէք Տիրոջը, մեր Աստծուն, երկրպագեցէք Նրա ոտքերի պատուանդանին, որովհետեւ սուրբ է»<sup>9</sup>: «Թագաւորները երեսները գետին խոնարհած երկրպագելու են Քո առաջ եւ համբուրելու են ոտքերիդ փոշին»<sup>10</sup>:

Նոր Կտակարանում, Յիսուսի ամբողջ կեանքը, Մարգեղութիւնից մինչեւ Համբարձում, շրջապատուած է հրեշտակների պաշտամունքով ու ծառայութեամբ: Յիրաւի, երբ Աստուած «Իր Միածինը մտցնում է աշխարհ, ասում է. "Թող երկրպագեն Նրան Աստծոյ բոլոր հրեշտակները"»<sup>11</sup>: Մոգերի մատուցած երկրպագութիւնը իրենց լրումին է հասցնում մեսիանական մարգարէութիւնները, որոնք աւետում էին ազգերի պաշտամունքը Իսրայէլի Աստծուն:

<sup>1</sup> Ղկս 4, 8

<sup>2</sup> Հմմտ. Ղկս 1, 46-49

<sup>3</sup> Հմմտ. Սղմ 95, 1-6

<sup>4</sup> Սղմ 24, 9.10

<sup>5</sup> Սբ. Օգոստինոս, *Enarratio in Psalmum 62*, 16.

<sup>6</sup> Սղմ 22, 28; 72, 9-11

<sup>7</sup> Սղմ 95, 6

<sup>8</sup> Սղմ 96, 9

<sup>9</sup> Սղմ 99, 5

<sup>10</sup> Ես 49, 23

<sup>11</sup> Եբբ 1, 6

Յիսուս ինքը յիշեցնում է «Հօրը հոգիով եւ ճշմարտութեամբ երկրպագելու» պարտականութիւնը, որովհետեւ «Հայրը այդպիսի երկրպագուներ է կամենում»<sup>1</sup>: Իր հասարակաց կեանքի ընթացքում, Յիսուս բազում անգամներ երկրպագութիւններ էր ստանում անձանց կողմից, որոնք ճանաչում եւ ընդունում էին Իրեն որպէս հրաշագործ. բորտը<sup>2</sup>, Յայրուսը<sup>3</sup>, աշակերտները<sup>4</sup>, Յակոբի եւ Յովհաննէսի մայրը<sup>5</sup>, ի ծնէ կոյրը<sup>6</sup>, յարութիւնից յետոյ գերեզմանից վերադարձող կանայք<sup>7</sup>, առաքեալներն ու աշակերտները համբարձումից անմիջապէս յետոյ<sup>8</sup>: Յարուցեալ Յիսուսի հետ հանդիպման պահին Թովմասի խօսքերը. «Տէր իմ եւ Աստուած իմ»<sup>9</sup>, երկրպագութեան եւ պաշտամունքի արտայայտութիւն են: Պօղոս Առաքեալը հաստատում է, որ «յանուն Յիսուսի ամէն ծունկ ծալուած է երկնքում, երկրի վրայ եւ ստորերկրեայ ոլորտներում, եւ իւրաքանչիւր լեզու հռչակում է՝ որ Յիսուս Քրիստոս Տէրն է, ի փառս Հայր Աստծոյ»<sup>10</sup>: Յայտնութեան գիրքը նկարագրում է «քսանչորս երէցներ, որոնք երկնքում երկրպագում էին Նրան՝ ով նստում է գահի վրայ եւ պաշտում էին Նրան՝ ով ապրում է յաւիտեանս յաւիտենից»<sup>11</sup>:

Ծէսի մէջ, Եկեղեցին, միացած իր Տիրոջը եւ Սուրբ Հոգու ներգործութեան ներքոյ, երկրպագութեամբ, փառաբանութեամբ եւ օրհնեղութեամբ իր երախտագիտութիւնն է մատուցում Հայր Աստծուն, որը միշտ հարուստ է սիրով ու ողորմութեամբ. «Օրհնեալ ես, Տէր Աստուած մեր. մենք օրհնում ենք Քեզ եւ գովում. դաւանում ենք Քեզ, Տէր, եւ երկրպագում. փառաւորում ենք Քեզ եւ գոհութիւն մատուցում, Տէր, մեծ փառքիդ համար», երգում ենք Առաւօտեան Ժամերգութեան ընթացքում:

Պատարագի մատուցման ժամանակ, հացի եւ գինու նիւթական տեսակների ներքոյ Քրիստոսի իրական ներկայութեան հանդէպ մեր հաւատքը արտայայտում ենք, ի միջի այլոց, նաեւ ծնրադրութեամբ կամ խոնարհուելով, որպէս Տիրոջ հանդէպ երկրպագութեան նշան: Բարեպաշտութիւնը, որ հաւատացեալներին մղում է ծնրադրելու Ամենասուրբ Հաղորդութեան առջեւ, օգնում է նրանց առաւել խորը կերպով մասնակցելու Զատկական Խորհուրդին եւ երախտագիտութեամբ պատասխանելու պարգեւին Նրա՝ ով Իր Մարդեղութեամբ անդադար հեղում է աստուածային կեանքը Իր Մարմնի անդամների վրայ: Քրիստոս Տիրոջ առջեւ երկրպագելով, հաւատացեալները վայելում են Նրա ընտանի մտերմութիւնը եւ Նրա առջեւ բացում են իրենց սրտերը, իրենց եւ իրենց բոլոր սիրելիների համար, աղօթելով աշխարհի խաղաղութեանն ու փրկութեանը ի նպաստ: Քրիստոսի հետ, Սուրբ Հոգու առաջնորդութեամբ, իրենց ամբողջ կեանքը Հայր Աստծուն նուիրելով, երկրպագութեան հոգեւոր տրամադրութիւնից ստանում են հաւատքի, յոյսի եւ սիրոյ աճ: Այսպիսով, հզօրացնում են հոգեւոր այն բոլոր տրամադրութիւնները, որոնք անհրաժեշտ են Տիրոջ մահուան եւ յարութեան յիշատակը արժանապէս ծիսակատարելու եւ Հօր կողմից տրուած մեր հոգեւոր կեանքի սնունդը ստանալու համար:

<sup>1</sup> Յվհ 4, 23

<sup>2</sup> Մտթ 8, 2

<sup>3</sup> Ղկս 8, 40

<sup>4</sup> Մտթ 14, 33

<sup>5</sup> Մտթ 20, 20

<sup>6</sup> Յվհ 9, 38

<sup>7</sup> Մտթ 28, 17

<sup>8</sup> Ղկս 24, 52

<sup>9</sup> Յվհ 20, 28

<sup>10</sup> Փլպ 2, 10-11

<sup>11</sup> Յյտ 4, 10; 11, 16; 19, 4; 22, 3

Խաչակնքումը ծիսական այն նշաններից մէկն է, որոնք առաւել սերտորէն են կապուած կրօնական կեանքին եւ առաւել յաճախակի են գործածուած ծիսակատարութիւնների ընթացքում: Այս իսկ պատճառով, քրիստոնեայի նաեւ ամենահարագատ նշաններից մէկն է, որն ամէնօրեայ կեանքն ամբողջովին կարծես վերածուած է մի տեսակ ծէսի, գրեթէ աստուածային պաշտամունքի:

Այս նշանը, որն իր ընտանեկան պարզութեան մէջ հանդիպում է իւրաքանչիւր գործի սկզբնաւորութեանը եւ վերջաւորութեանը, կարծես կամենում է գոհացում տալ Պօղոս Առաքեալի յանձնարարութեանը. «Ինչ էլ որ ասէք կամ անէք, ասացէք եւ արէք յանուն Տէր Յիսուս Քրիստոսի»<sup>1</sup>:

Աւանդութեան համաձայն, խաչակնքման սովորութիւնը սկսել է առաքելական շրջանից: Հաստատ տեղեկութիւնները, սակայն, պատկանում են չորրորդ դարին. այդ շրջանում, խաչակնքումը նշանակում էր քրիստոնեայի ինքնութիւնը, դրոշմը, որը չէր ամաչում այդպիսին լինելուց, թէեւ յաճախ այդ նշանը առաջնորդում էր մարտիրոսութեան: Կամաց կամաց տարածուեց նաեւ սեփական ճակատը, շուրթերը եւ սիրտը խաչակնքելու սովորութիւնը, որպէս նշան մտքերի, խօսքերի եւ ցանկութիւնների մաքրագործման: Այս սովորութիւնը տակաւին պահպանում է Արեւմտեան Եկեղեցում եւ կատարում է Աւետարանի ընթերցումից առաջ: Եօթներորդ դարում քրիստոնեաները սկսում են ամբողջ մարմնի խաչակնքումը, որպէս ամբողջ անձի մաքրագործման նշան, ինչպէս նաեւ խաչակնքումը առարկաների, վերջինները Աստծոյ ծառայութեանը նուիրելու համար:

Մեր անձի վրայ ձեռքի շարժումով գծուած խաչի նշանը իմաստաւորում է կեանքի ընդունումը յանուն Յիսուսի. կեանքի ընդունումը իր բոլոր ամէնօրեայ կամ արտասովոր ծանրութիւններով, յոգնութիւններով, տառապանքներով, մինչեւ մահ: Իմաստաւորում է նաեւ վերջնական յաղթանակի վերաբերեալ վստահութիւնն ու համոզումը:

Քրիստոնեային չպէտք է սարսափեցնի փաստը՝ որ կեանքին մաս կազմող բազում իրականութիւններ հանդերձաւորուած են խաչի կերպարանքով: Կարելի է մինչեւ իսկ ասել, որ ամէն բան ներկայանում է խաչի կերպարանքով: Մարդն ինքնին ստեղծուած է խաչի նմանութեամբ, դէպի անհունութիւնը տարածուած բազուկներով: Խաչը կաղապարուած է մարդու մարմնի չափերով եւ գրեթէ միշտ մնում է, կարծես գամուած, նրա ուսերին. բայց ո՛չ թէ մարդուն տապալելու ու կործանելու, այլ ակելի՝ մարդու իրական յենարանը հանդիսանալու համար, դէպի Աստծոյ հետ միութիւնը բարձրանալու նպատակով. «խաչի ճանապարհով՝ դէպի լոյս»:

Ծիսական արարողութիւններում, հետեւաբար, խաչակնքման նշանը կամենում է արտայայտել ճշմարտութիւնը՝ որ փրկութիւնը գալիս է խաչից, եւ որ քրիստոնեայի կեանքում ամէն բան պէտք է նշանակուի խաչի, այսինքն՝ նշանակուի լինի: Տրամաբանական է, ուրեմն, քրիստոնեաների սովորութիւնը՝ մերձեանալ Աստծուն խաչի նշանի միջնորդութեամբ, ինչպէս Յիսուս վարուեց մեզ փրկելու համար, հաստատուն կերպով հաւատալով յաղթանակին. «Այս նշանով կը յաղթես»:

Ապա, արտասանելով «յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու» խօսքերը, քրիստոնեան արտայայտում է ճշմարտութիւնը՝ որ մարդիկ ընդունուած են Ամենասուրբ Երրորդութեան հետ հաղորդակցութեանը խաչի միջոցով, եւ որ Ամենասուրբ Երրորդութիւնը մեզ միաւորում է Իրեն ճիշտ խաչի միջոցով, որովհետեւ խաչն է մարդուն Աստծոյ, երկինքը երկրի հետ միաւորող կամուրջը: Ամէն բան կախումնաւոր է խաչի ծառից, ինչպէս կեանքի, բերկրանքի ու յոյսի աղբիւրից: Այստեղից հետեւում է՝ որ խաչի նշանը, լաւ հասկացուելու դէպքում, կազմում է քրիստոնէական ամբողջ կեանքի ամփոփումը, Հայր Աստծոյ, Որդի Աստծոյ, Սուրբ Հոգի Աստծոյ լոյսի ներքոյ եւ մէջ:

<sup>1</sup> Կղս 3, 17

Թող այս նշանը լինի մեր ամենօրեայ Աւետարանը, գերբնական մթնոլորտը՝ որից ներս գործում ենք, կնիքը մեր օրէցօր ապրուած կեանքի, գրաւականը գալիք երանութեան:

## ԽՅՆԱԿԱՐԿՈՒՄ

Խոնկը, որ խէժային հոտաւէտ նիւթ է, Աստուածաշնչում յիշատակում է որպէս հրէական ամենահին արարողակարգի տարրերից մէկը: Խոնկը ծխում էր Տապանակի առջեւ գտնուող խորանի վրայ, իսկ յետոյ նաեւ Տաճարում, ունենալով «*Բնական արարողութեան*» արժէք<sup>1</sup>: Խնկարկումը անհրաժեշտ պայման էր պատարագների ժամանակ<sup>2</sup>, եւ Իսրայէլի պաշտամունքներին մաս էր կազմում ընդհանրապէս որպէս աղօթքի խորհրդանշան. «Աղօթքներս, Աստուած, թող խոնկի նման դէպի Քեզ բարձրանան»<sup>3</sup>: Կուռքերի առաջ խոնկ ծխելը հաւատուրացութեան նշան էր<sup>4</sup>:

Նոր Կտակարանում, Ղուկաս Աւետարանիչը պատմում է՝ որ Տիրոջ հրեշտակը Յովհաննէս Մկրտչի ծնունդը Ձաքարիային աւետում է՝ մինչ վերջինս, որպէս այդ տարուայ հերթափոխ քահանայ, խոնկ էր մատուցում Երուսաղէմի Տաճարում<sup>5</sup>: Արեւելքից եկած մոգերը, հրեաների նորածին թագաւորին մեծարելու համար, որպէս նուէր մատուցում են խոնկ, ոսկու եւ զմիւսի հետ միասին<sup>6</sup>:

Խոնկը, որ դրում է կրակի վրայ, մատնանշելով ամպի նման վեր բարձրացող ծուխը, խորհրդանշանն է դէպի երկինք բարձրացող աղօթքի. հետեւաբար՝ պաշտամունքի արարք է, համազօր՝ միւս նուիրաբերումներին: Գործածւում է հանդիսաւորութիւն տալու համար Ամենասուրբ Պատարագի մատուցման որոշ պահերի. խորանի, աւետարանի, ընծաների, պատարագչի եւ ներկայ ժողովրդի խնկարկումը: Գործածւում է նաեւ թափօրների, օրհնութիւնների եւ յուղարկաւորութեան արարողութեան ընթացքում: Կարելի է գործածել նաեւ հաւատացեալների տներում, սրբապատկերների առաջ, ընկերակցելով հետեւեալ աղօթքով. «Թող դէպի քեզ բարձրանայ, Տէր, մեր աղօթքի խոնկը: Ինչպէս այս անուշահոտ ծուխը տարածւում է այս բնակարանում, նմանապէս Եկեղեցիդ թող աշխարհում տարածի Քրիստոսի հոգեպարար բուրմունքը»:

Եկեղեցիների աւագ խորանների վրայ Պատարագի ընթացքում ծխող խոնկը նշանակում է՝ որ Քրիստոսի գոհը Աստծոյ առաջ ընդունւում է որպէս անուշահոտ ընծայ: Նշանակում է նաեւ, որ հաւատացեալների աղօթքները բարձրանում են Աստծոյ գահի առաջ<sup>7</sup>: Եկեղեցու ներսը խնկարկելը նշանակում է՝ որ այն աղօթքի տուն է: Բայց նախեւառաջ խնկարկում է Աստծոյ ժողովուրդը, որովհետեւ Աստծոյ կենդանի տաճարն է եւ հաւատացեալներից իւրաքանչիւրը հոգեւոր խորան է<sup>8</sup>:

## Համբոյր

Հին եւ Նոր Կտակարաններում յաճախ ենք հանդիպում Համբոյրի գաղափարին, ո՛չ միայն որպէս ծնողների եւ որդիների, ազգականների ու ընկերների միջեւ

<sup>1</sup> Հմմտ. Ելց 30, 7-8

<sup>2</sup> Հմմտ. Ղւտ 2

<sup>3</sup> Սղմ 141, 2; Հմմտ. Յյտ 8, 3-4

<sup>4</sup> Հմմտ. 1Թգ 11, 8; 2Թգ 23, 5

<sup>5</sup> Հմմտ. Ղկա 1, 9

<sup>6</sup> Հմմտ. Մտթ 2, 11

<sup>7</sup> Հմմտ. Յյտ 8, 3-4

<sup>8</sup> Հմմտ. Հռմ 12, 1

բարեկամութեան արտայայտութիւն, այլ նաեւ որպէս օրհնութեան եւ հաշտութեան նշան: Պօղոս Առաքեալը հաւատացեալներին հրաւիրում է միմեանց ողջունելու սուրբ համբոյրով<sup>1</sup>: Պետրոս Առաքեալը գրում է. «Փոխադարձաբար միմեանց ողջունեցէք աստուածսիրութեան համբոյրով»<sup>2</sup>:

Ծիսական ականդութեան համաձայն, Խորանի, Աւետարանի եւ Խաչի նկատմամբ մեծարանքը արտայայտում է համբոյրով: Այսպիսով, լինի ձեռնադրուած պաշտօնեաները՝ թէ աշխարհական հաւատացեալները, արտայայտում են Խորանի, Աւետարանի եւ Խաչի նկատմամբ իրենց մեծարանքը, որովհետեւ սրանք ներկայացնում են Քրիստոսին: Հետեւաբար, այս երեք իրականութիւններին տրուած համբոյրը Քրիստոսի նկատմամբ հաւատքի եւ սիրոյ արարք է, Քրիստոսի՝ որի խօսքերը «հոգի են եւ կեանք»<sup>3</sup>, եւ որի կեանքը, մեր համար զոհաբերուած, նշանն է անսահման սիրոյ:

Սրբերի մասունքներին տրուած համբոյրը նշանն է այն իրական հաղորդակցութեան, որ գոյութիւն ունի երկրի վրայ տակաւին պանդուխտ Եկեղեցու անդամների եւ երկնքում արդէն փառաւորուած Եկեղեցու անդամների միջեւ: Նրանց հետ հաղորդակցուած ենք նաեւ համբոյրով, որովհետեւ մեր աւագ եղբայրներն են եւ քոյրերը, որոնք մեզնից առաջ հերոսաբար քայլեցին Աւետարանի կողմից գծուած ուղիով եւ այժմ մեզ նոյնպէս օգնում են հասնելու իրենց եւ մեր միակ Հօր տունը:

## Մոմեր

1. \*ՊՁ բազմաթիւ խորհրդանշական տարրեր է ներշնչել Եկեղեցու ծիսական կեանքին, յատկապէս որովհետեւ յիշեցնում է Քրիստոսին որպէս «աշխարհի լոյսը», «արդարութեան արեգակը»:

Արարչագործութեան սկզբում արդէն Աստուած ասում է. «Թող լոյս լինի»: Եւ լինում է լոյս: «Եւ Աստուած տեսաւ՝ որ լոյսը բարի է եւ այն անջատեց խաւարից, եւ անուանեց լոյսը ցերեկ, իսկ խաւարը՝ գիշեր»<sup>4</sup>: Սաղմոսերգուն Աստծուն փառաւորում է որպէս «վեհութեամբ ու պայծառութեամբ պատուած, որ հագնում է լոյսը պատմուճանի նման»<sup>5</sup>: Հին Ուխտի սրբավայրում, Տապանակի առջեւ դրուած էր եօթնաբազուկ ոսկեայ մոմակալը, որի վրայ մշտատեւ այրւում էր անմար հուրը<sup>6</sup>: Յայտնութեան գրքի հեղինակը նոյնպէս տեսնում է «հրեղէն եօթ ջահեր», որոնք այրւում էին Նրա առաջ՝ ով «բազմում է գահին», եւ եօթ ոսկեայ մոմակալներ՝ մարդու Որդու չորս կողմը<sup>7</sup>: Մոմերի գործածութիւնը գտնում ենք նաեւ նորահաստատ Եկեղեցու ծիսական հաւաքներում<sup>8</sup>:

Վառուած մոմերը գործածւում են գրեթէ բոլոր ծիսական արարողութիւնների ընթացքում. Պատարագի մատուցման, Մկրտութեան, ծիսական թափօրների, Աւետարանի ընթերցման ժամանակ եւ այլուր: Իմաստի եւ նշանակութեան հարստութեամբ, լոյսից եւ կրակից վերցուած խորհրդանշանների շարքում ամենաարտայայտիչն է **պարկեան մոմը**, որ վառւում է Աւագ Շաբաթ օրուայ Երեկոյեան ժամերգութեան ժամանակ, մինչ երգւում է «Լուսաւորուիր, Երուսաղէմ» շարականը եւ ընթերցւում են Եսայի մարգարէի խօսքերը. «Լուսաւորուիր,

<sup>1</sup> Հմմտ. Հռմ 16, 16; 1Կր 16, 20; 2Կր 13, 12; 1Թս 5, 26

<sup>2</sup> 1Պտ 5, 14

<sup>3</sup> Յվհ 6, 63

<sup>4</sup> Ծնն 1, 3-5

<sup>5</sup> Սղմ 104, 2

<sup>6</sup> Հմմտ. Ելց 27, 20; ՂԼտ 24, 2-4; 1Սմ 3, 3

<sup>7</sup> Հմմտ. Յյտ 1, 12-13; 4, 5

<sup>8</sup> Հմմտ. Գրծ 20, 8

լուսաւորուիր, Երուսաղէմ, որովհետեւ հասել է քո լոյսը եւ Տիրոջ փառքը ծագում է քո վրայ»<sup>1</sup>: Զատկական մոմը խորհրդանշում է յարութիւն առած Քրիստոսին, մահուանը եւ խաւարին Յաղթողին, արգարութեան Արեգակին՝ որ մայր չի մտնում, ճշմարիտ Լոյսին՝ որ լուսաւորում է մարդկանցից իւրաքանչիւրին:

Զատկական մոմի շարունակութիւնն է Մկրտութեան արարողութեան վերջում վառուող մոմը: Մկրտութեան շնորհիւ՝ Աստծոյ սէրը «մեզ կանչել է խաւարից դէպի իր սքանչելի լոյսը»<sup>2</sup>: «Մկրտութիւնը անուանում է *Լուսաւորութիւն*, որովհետեւ նրանք՝ ովքեր ստանում են այս ուսուցումը, լուսաւորում են իրենց մտքերում»<sup>3</sup>: Քանի որ Մկրտութեամբ հաւատացեալը ընդունել է Խօսքը, որը «ճշմարիտ լոյսն է, որ լուսաւորում է իւրաքանչիւր մարդու»<sup>4</sup>, «լուսաւորուելուց յետոյ»<sup>5</sup> հաւատացեալն ինքը դարձել է «լոյսի որդի»<sup>6</sup>, «ինքը նոյնպէս լոյս»<sup>7</sup>: Սբ. Գրիգոր Նազիանզացին գրում է. «Մկրտութիւնը Աստծոյ պարգեւներից ամենագեղեցիկն է ու ամենասքանչելին: ... Մկրտութիւնն անուանում է պարգեւ, շնորհ, օծում, *Լուսաւորութիւն*, անմահութեան զգեստ, վերածնութեան ակազան, կնիք, ... : Յատուկ կերպով կոչւում է *Լուսաւորութիւն*, որովհետեւ մեծապայծառ լոյս է»<sup>8</sup>:

Մկրտուածների մեր կեանքը նոյնպէս պէտք է ներկայանայ որպէս *Լոյսի* շարունակական փորձառութիւն: Վառուած մոմը նոր մկրտուածին տալով, Եկեղեցին ասում է. «Թող լուսաւորի քեզ Քրիստոս», ինչպէս եթէ ասէր. «Մօտեցէք Նրան եւ կը լուսաւորուէք»<sup>9</sup>: Յիրաւի, Մկրտութեան յատուկ ներգործութիւնն է մարդու հոգեւոր աչքերի բացումը դէպի լոյսը, նորադարձ անձանց ներածելով Աստծոյ խորհրդից ներս, հաւատքի միջոցով: Սբ. Կիպրիանոսը գրում է. «Երբ Մկրտութեան ջուրը, որ վերածնեց ինձ աստուածային կեանքին, ջնջեց անցեալի իմ յանցանքները, մաքրագործուած սրտիցս ներս յորդառատ լցուեց մի լոյս ի վերուստ»<sup>10</sup>: Պօղոս Առաքեալի կողմից արտայայտուած միեւնոյն միտքն է. «Աստուած, որ ասաց. "խաւարից թող լոյս ծագի", նոյն ինքը ծագեց մեր սրտերից ներս, լուսափայլ շողացնելու համար Աստծոյ փառքի ճանաչումը, որ Քրիստոսի դէմքի վրայ է»<sup>11</sup>: Այս լոյսի մէջ պէտք է ընթանայ հաւատացեալը իր կեանքի ամբողջ ընթացքում, «վկայելու համար լոյսին, որպէսզի ամէն ոք հաւատայ»<sup>12</sup>: Աւելին. հարկ է՝ որ մեր սրտերում վառուած փոքրիկ բոցը աճի եւ տարածուի, մինչեւ որ դառնայ հրդեհ, որովհետեւ անհաւատ աշխարհը, ուր ապրում ենք, շահ տու շահ կարիք ունի լոյսի, լուսաւորուելու եւ իրականութիւնները Աստծոյ համաձայն տեսնելու համար. *Կեանք* եւ *Լուսաւորութիւն*:

Այս առումով շատ գեղեցիկ ու իմաստալի է Հայ Եկեղեցու սովորութիւնը՝ հաւատացեալների նուիրած մոմերը վառել ակազի մէջ մխրճուած: Վառուող, հալուող, բայց միեւնոյն ժամանակ լուսատու մոմը ակազի մէջ մխրճելու իր արարքով հաւատացեալը կարծես աղօթում է. «Տէր Յիսուս, մարդկութեան նախածնողներին տրուած պատիժը վաւերական է նաեւ իմ համար. հող էի եւ հող պիտի դառնամ: Բայց մինչեւ հողին դառնալս, այս մոմի նման, կամենում եմ հալուել սիրոյդ ջերմութեամբ

<sup>1</sup> Ես 60, 1

<sup>2</sup> 1Պտ 2, 9

<sup>3</sup> Սբ. Յուստինոս, *Apologia* 1, 61, 12.

<sup>4</sup> Յվհ 1, 19

<sup>5</sup> Եբր 10, 32

<sup>6</sup> 1Թս 5, 5

<sup>7</sup> Եփս 5, 8

<sup>8</sup> Սբ. Գրիգոր Նազիանզացի, *Orationes* 40, 3-4.

<sup>9</sup> Սղմ 33, 6

<sup>10</sup> Սբ. Կիպրիանոս, *Epistula ad Donatum* 4.

<sup>11</sup> 2Կր 4, 6

<sup>12</sup> Յվհ 1, 5

եւ չորսկողմս տարածել Քո անմահ լոյսը: Այս կեանքիս մայրամուտին, երբ կենսատու բոցը կը լքի անձս, աղաչում եմ Քեզ, տար ինձ անմայրամուտ լոյսիցդ ներս բնակուելու, ուր յաւիտեան կը փառաբանեմ Քեզ Հօրդ եւ Սուրբ Հոգուդ հետ. ամէն»:

Հետեւաբար հասկանում ենք՝ թէ քանիցս կարեւոր է Յիսուսի խօսքը իր աշակերտներին. «Դուք աշխարհի լոյսն էք»<sup>1</sup>. աշխարհի լոյսը՝ կեանքի վկայութեամբ: Այս իսկ պատճառով, Պօղոս Առաքեալը յորդորում է. «Մի կողմ նետեցէք ձեզնից խաւարի գործերը եւ սպառազինուեցէք լոյսի զրահներով»<sup>2</sup>: «Լոյսի պտուղներն են. բարութիւն, արդարութիւն եւ ճշմարտութիւն»<sup>3</sup>:

## Բացականչութիւններ

Ծէսի ընթացքում գործածուող բացականչութիւնները փառաբանական փոքրիկ աղօթքներ են, որոնք օգնում են արտայայտելու Աստծոյ խօսքի ընդունելութիւնը, սեփական հաւատքի պատանդութիւնը եւ կատարուած աղօթքների վաւերացումը:

Հին Կտակարանում, ծիսական աղօթքներին տրուած հաւաքական համաձայնութեան արտայայտութիւնն էին: Օրինակի համար, երբ Տապանակի առջեւ դեւտացիները փառաբանական երգեր եղանակեցին Տիրոջը, «ամբողջ ժողովուրդը պատասխանեց. Եմէն, Ելէլու-իս»<sup>4</sup>: Նոր Կտակարանում նոյնպէս յաճախակի են ծիսական բացականչութիւնները, յատկապէս Պօղոս եւ Պետրոս Առաքեալների նամակներում եւ Յայտնութեան գրքում<sup>5</sup>:

Եկեղեցու ծիսական արարողութիւնների ընթացքում, այս բացականչութիւնները կարծես հաւատացեալ ժողովրդի ցնծալի աղաղակներն են Տիրոջ առաջ, որն անցնում է Աւետարանի կամ Ամենասուրբ Հաղորդութեան նշանների ներքոյ: Անհնարին է այստեղ յիշատակել այն բոլոր բացականչութիւնները, որոնք գործածուում են Գոհաբանական Պատարագի եւ Ժամերգութիւնների ընթացքում: Թուենք միայն մի քանիսը.

- Փառով-Քեզ, Տէր Աստուած մեր.
- Կեցո՛ւ, Տէր.
- Շնորհեա՛ւ, Տէր.
- Քեզ Տեսաւնդ յանձն եղիցո՛ւ.
- Տէր, ողորմեա՛ւ.
- Օրհնեալ Տէր մեր Յիսուս-Քրիստոս.
- Փառով Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեանից :

Երբեմն բացականչութիւնները ստանում են աւելի ընդարձակ տեսք եւ բաղադրեալ կազմութիւն: Այսպիսի դէպքերում, սովորաբար կոչուում են մաղթանքներ.

- Եմէնակեցոյց, ճշմարիտ, սուրբ, մեծի յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ վայելել փառով, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեանից.
- Փառով-Քեզ, Աստուած, փառով-Քեզ. յաղափս ամենայնի, Տէր, փառով-Քեզ:

Քրիստոնէական Ծէսից ներս, յատուկ կարեւորութեամբ եւ յաճախականութեամբ գործածուում են երկու բացականչութիւններ, որոնց վերաբերեալ կամենում ենք

<sup>1</sup> Մտթ 5, 14

<sup>2</sup> Հռմ 13, 1-2

<sup>3</sup> Եփս 5, 9

<sup>4</sup> 1Մն 16, 36

<sup>5</sup> Հմմտ. Հռմ 1, 25; Գղա 1, 5; Եբբ 13, 21; 2Պտ 3, 18; Յյտ 4, 8; 5, 13; 7, 12; ...

ներկայացնել համառոտ՝ բայց բաւարար տեղեկութիւններ: Դրանք են «Ամէն»ը եւ «Ալէլուիա»ն:

## 1. Ամէն

Աստուածաշնչի վերջին Գիրքը աւարտուում է եբրայեցերէն «Ամէն» բառով<sup>1</sup>, որ նշանակում է «Թող այսպէս լինի», կամ աւելի ճիշտը՝ «այսպէս է»: Այս բառը շատ յաճախ ենք գտնում Նոր Կտակարանի աղօթքների վերջում<sup>2</sup>: Եկեղեցին նոյնպէս, իր աղօթքները վերջացնում է «Ամէն»ով:

Եբրայեցերէնում, «Ամէն»ը միանում է «հաւատալ» բայի արմատին: Այդ արմատը արտայայտում է իմաստը հաստատութեան, վստահելիութեան, հաւատարմութեան: Արդ հասկանալի է՝ թէ ինչու «Ամէն»ը կարող է իմաստաւորել ե՛ւ Աստուծոյ հաւատարմութիւնը մեր հանդէպ, ե՛ւ մեր վստահութիւնը իր հանդէպ:

Եսայի մարգարէի գրութեան մէջ հանդիպում ենք «ճշմարտութեան Աստուած», բառացիորէն «Ամէնի Աստուած» արտայայտութեանը, այսինքն՝ իր խոստումներին հաւատարիմ Աստուածը. «Ո՞վ է կամենում օրհնուել երկրի վրայ, թող կամենայ այդպիսին լինել հաւատարիմ Աստուծոյ համար»<sup>3</sup>: Յիսուս յաճախ է գործածում «Ամէն» բառը<sup>4</sup>, երբեմն նաեւ կրկնակի ձեւով<sup>5</sup>, ընդգծելու համար իր ուսուցումների վստահելիութիւնը, իր հեղինակութիւնը՝ որ հիմնուած է Աստուծոյ ճշմարտութեան վրայ:

Քրիստոնէական հաւատքի դաւանութիւնը՝ Հաւատամքը նոյնպէս վերջանում է «Ամէն»ով: Հաւատամքի այս վերջին խօսքը կրկնում եւ հաստատում է այն բառերը՝ որոնցով սկսում է Հաւատամքը. «Ես հաւատում եմ»: Հաւատալ՝ նշանակում է «Ամէն» ասել Աստուծոյ բոլոր խօսքերին, խոստումներին ու պատուիրաններին. նշանակում է վստահել Նրան՝ ով «Ամէն»ն է անսահման սիրոյ եւ կատարեալ հաւատարմութեան: Քրիստոնէական ամէնօրեայ կեանքը պէտք է մի «Ամէն» լինի մեր Մկրտութեան ժամանակ արտասանուած «Ես հաւատում եմ» դաւանութեանը:

Յիսուս Քրիստոս ինքը «Ամէն»ն է<sup>6</sup>: Նա մեր հանդէպ Հօր սիրոյ վճռական «Ամէն»ն է: Ընդունում եւ իր լիութեանն է հասցնում Հօր նկատմամբ մեր «Ամէն»ը: «Աստուծոյ բոլոր խոստումները իրականացան Նրանում: Այս իսկ պատճառով, իր միջոցով դէպի Աստուած բարձրանում է մեր Ամէնը, իր փառքի համար»<sup>7</sup>:

Հետեւաբար հասկանում ենք՝ թէ իմաստով որքան ծանրաբեռնուած է այս բացականչութիւնը, որով պատասխանում ենք ծիսական արարողութիւնների ընթացքում կատարուող աղօթքներին: Մեր հաւատքի պատասխանն է, բայց նաեւ յանձնառութիւնը՝ տանելու եւ մեր ամէնօրեայ կեանքից ներս իրագործելու այն՝ ինչին որ «Ամէն» ենք ասել ծիսական աղօթքի ժամանակ. Աստուծոյ փառքը եւ մարդկութեան փրկութիւնը:

## 2. Ալէլուիա

Սա մի հնագոյն բացականչութիւն է, որ հասել է մեզ Հին Կտակարանից եւ նշանակում է «գովասանք Աստուծուն»: Քրիստոնէական Մէսին անցել է որպէս ուրախութեան, բերկրանքի եւ ուժի հանդիսաւոր ու շեշտուած արտայայտութիւն, գործածուած՝ յատկապէս Զատիկուայ ծիսական ժամանակում եւ կիրակնօրեայ

<sup>1</sup> Հմմտ. Յյտ 22, 21

<sup>2</sup> Հմմտ. Հռմ 1, 25; 16, 27; 1Կր 14, 16; 1Տմ 1, 17; Եբր 13, 21; 1Պտ 4, 11; 5, 11; Յյտ 5, 14; 7, 12; ...

<sup>3</sup> Ես 65, 16

<sup>4</sup> Հմմտ. Մտթ 6, 2.5.16

<sup>5</sup> Հմմտ. Յվհ 5, 19

<sup>6</sup> Հմմտ. Յյտ 3, 14

<sup>7</sup> 2Կր 1, 20

աղօթքների ընթացքում, իր մէջ մարմնաւորուած արտայայտելով քրիստոնեայ ժողովրդի բերկրանքը Տիրոջ Յարուժեան համար («Չոտարճացեալն մեծաոտարսոն-նեամբ աւերելոյ յարոնեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսոսի Քրիստոսի ...»):

Աստծուն ուղղուած գովաբանական այս բացականչութիւնը, որ գործածուած է որպէս մեր բերկրանքի արտայայտութիւն, խորացուած խորհրդածութեան արժանի նիւթ է, որ առաջնորդում է մեզ դէպի մեր կրօնական մտքի ակունքները, ուր ընկալում եւ ըմբռնում ենք՝ որ Աստծոյ փառքը մեր բերկրանքն է, ինչպէս արտայայտում է նաեւ Առաւօտեան ժամերգութեան Փառ-ի ի Բարձոնն երգին մաս կազմող այս միւս գեղեցիկ բացականչութիւնը. «Երախտագիտութիւն ենք յայտնում Քեզ, Տէր, Քո մեծ փառքի համար» («Գոհանամէ Տէր զչէն շատն մեծի փառաց խոց»):

Ինչպէ՞ս է սա հնարաւոր: Ինչպէ՞ս կարող է Աստծոյ անսահման եւ խորհրդաւոր մեծութիւնը լինել մեր երախտագիտութեան եւ միաժամանակ՝ մեր բերկրանքի աղբիւրը: Այո՛, հնարաւոր է, որովհետեւ Աստուած «ամբողջովն» մեր համար է:

Աստուած կեանքն է, Աստուած զօրոն-նն է, Աստուած ճշմարտոն-նն է, Աստուած Բարոն-նն է, Աստուած Գեղեցկոն-նն է. այո՛, վերջում, Աստուած մեր երջանկոն-նն է: Ալէլուիա:

Երգենք այստեղ Ալէլուիան, մինչ տակաւին գուրկ ենք ապահովութիւնից, որպէսզի մի օր կարողանանք այն երգել վերեւում, այլեւս ապահով ... : Քանի՞ցս երանելի է այնտեղ վերեւում երգուած Ալէլուիան: Ո՛վ Ալէլուիա ապահովութեան ու խաղաղութեան ... : Այստեղ այն երգում ենք որպէս մահամերձներ, այնտեղ երգելու ենք որպէս անմահներ: Այստեղ՝ յոյսի մէջ, այնտեղ՝ իրականութեան: Այստեղ՝ որպէս աքսորեալներ ու պանդուխտներ, այնտեղ՝ հայրենիքից ներս ... : Երգենք որպէս ճամփորդներ: Երգիր, բայց քայլիր, ... յառաջադիմելով սրբութեան մէջ<sup>1</sup>:

Ծիսական արարողութիւնների եւ ժամերգութիւնների ընթացքում, բացականչութիւններին եւ մաղթանքներին սերտօրէն կապուած են աւանդաբար Խարոյ կոչուող աղօթքները, որոնք մի տեսակ երկխօսութիւն են սարկաւազի (կամ սպասաւորի) եւ դպիրների (կամ ժողովրդի) միջեւ: Քանի որ ծիսական բոլոր արարողութիւնները եւ ժամերգութիւնները իրենց հոլթեամբ իսկ հասարակաց բնոյթի են եւ ո՛չ թէ անձնական, այս աղօթքները, ինչպէս նաեւ բոլոր մաղթանքներն ու բացականչութիւնները, ներկայանում են որպէս ընդհանուր կատարուած աղօթքին հաւատացեալների գործուն (ակտիւ) մասնակցութեան առաջին մակարդակը, որոնցով ճանաչում, հուշակում եւ դաւանում են Քրիստոսի ներկայութիւնը:

Բացականչութիւնները, ինչ տեսակի էլ լինեն (խնդրանքի, փառաբանութեան, երախտագիտութեան, ...), ինչ եղանակով էլ կատարուեն (հասարակաց կամ անձնական), պէտք է որպէս շարժիչ ուժ հանդիսանան հոգեւոր կեանքի համար: Միշտ, հաստատում է Պօղոս Առաքեալը, պարտաւոր ենք «երգել եւ սաղմոսել Տիրոջը մեր ամբողջ սրտով, ամէն ինչի համար անդադար շնորհակալութիւն յայտնելով Հայր Աստծուն, յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի»<sup>2</sup>:

## Թափօրներ

Թափօրը մի արարողութիւն է, որ պատասխանում է մարդկային եւ կրօնական մի կարիքի. միասին քայլելու արարքը արտայայտում է խմբի, հասարակութեան, մի ամբողջ ժողովրդի սերտ մտերմութիւնը, կայունութիւնն ու տոկունութիւնը: Մարդու պատմութեան բացայայտիչ նշաններից մէկն է, որ ներկայանում է որպէս միմեանց

<sup>1</sup> Սբ. Օգոստինոս, *Discorso* 256, 1. 2. 3.

<sup>2</sup> Եփս 5, 19-20

միջեւ զանազան կապեր ու գաղափարներ ունեցող մարդկանց երկար շարան, որոնք քայլում են միասին, միասին ենթարկւում են ճանապարհի փորձառութեանը, հնարաւոր բոլոր դժուարութիւններով հանդերձ, նախապէս սահմանուած նպատակակէտին հասնելուց առաջ: Թափօրը յիշեցնում է, որ բոլորս էլ պանդուխտներ ենք, որ ապրում ենք մի ամէնօրեայ ելէ, եւ բոլորս էլ ընթանում ենք միեւնոյն ճանապարհով, ուղղուած՝ դէպի բոլորիս ընդհանուր հայրենիքը: Իսկ եթէ միասին քայլում ենք աղօթելով ու երգելով, այնժամ մեզ է՛լ աւելի եղբայրացած ենք զգում հաւատքի, յոյսի եւ սիրոյ մէջ. աղօթքը զօրանում է եւ վստահութիւնը ամրանում. զգում ենք Աստծուն աւելի մօտիկ, աւելի մերը, աւելի հայր, որ մեզ տեսնում է, դիտում, սեղմում Իր գրկում, լսում մեր կարօտութիւնները: Այսպիսով, թափօրը դառնում է միջնորդութիւն, բարեխօսութիւն, հաւատքի դաւանութիւն, սխալների ապաշխարում, շնորհների հայցում, երախտագիտութեան արտայայտում, նոր կեանքի յանձնառում:

Իրականում, Աստծոյ ժողովուրդը Հին Կտակարանում ներկայանում է որպէս **խաչող ժողովուրդ**. Եգիպտոսից դէպի խոստացուած Երկիր, աքսորից դէպի Երուսաղէմ: Իսրայէլի որդիների յառաջխաղացումը նկարագրուած է որպէս մի մեծ տօնական թափօր, երգերով, երաժշտական գործիքներով եւ դրօշներով ոգեւորուած: Անապատում քայլելու ժամանակ, «ամէն անգամ՝ որ ամպը բարձրանում էր վրանների վրայ, Իսրայէլացիները ճանապարհ էին ընկնում. ուր ամպը կանգ էր առնում, այնտեղ Իսրայէլացիները իջեւանում էին: Իսրայէլացիները ճանապարհ էին ընկնում Տիրոջ հրամանով եւ Տիրոջ հրամանով կանգ էին առնում. այդտեղ իջեւանում էին այնքան ժամանակ, որքան որ ամպը մնում էր բանակատեղի վրայ»<sup>1</sup>: Նմանապէս, աքսորից վերադարձը նոյնպէս նկարագրուած է որպէս Տիրոջ կողմից առաջնորդուած թափօր. «Չպէտք է դուրս գաք աճապարանքով, ո՛չ էլ ինչպէս մէկը՝ որ փախչում է, որովհետեւ ձեր առջեւ քայլում է Տէրը. Իսրայէլի Աստուածը ձեր քարաւանի ետեւում է»<sup>2</sup>: Եւ, Երուսաղէմ հասնելով, «փոխն ի փոխ խմբերով փառաբանութիւններ ու երախտագիտութիւն էին երգում Տիրոջը, որովհետեւ բարի է, որովհետեւ Իր շնորհը Իսրայէլի հանդէպ տեւում է յաւիտ»<sup>3</sup>: Աստուածաշունչը յատուկ կերպով նկարագրում է չորս արտակարգ թափօրներ. Երիքովի գրաւումից առաջ<sup>4</sup>, Ուխտի Տապանակի փոխադրումը Երուսաղէմ<sup>5</sup>, Երուսաղէմի նոր պարիսպների կառուցման աւարտին՝ Նէէմիայի կազմակերպած թափօրը<sup>6</sup> եւ Յուդիթինը, Բէթուղիայի ազատագրումից յետոյ<sup>7</sup>: Այս առումով նշանակալի են նաեւ Սաղմոսներից շատերը. օրինակ, **սփռեց ինչպէս կոչուող սաղմոսները**<sup>8</sup>: Նոր Կտակարանում, յիշատակուած միակ թափօրը Յիսուսի փառաւոր մուտքն է Երուսաղէմ<sup>9</sup>:

Գոհաբանական Պատարագի մատուցման ընթացքում, Հայ Եկեղեցու աւանդութեան համաձայն՝ մեծ հանդիսաւորութեամբ կատարւում են հետեւեալ թափօրները.

– Պատարագի քահանայի եւ սպասաւորների մուտքը խորան, որ կատարւում է նախեւառաջ մեղքերի խոստովանութեամբ (**Մտաբովանդիմ առաջի Աստուծոյ ...**) եւ ապա հայցողական սաղմոսներով (**Միայն առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած ...**), եւ մերձեցումը պատարագի սեղանին, որ կատարւում է օրհնաբանական աղօթքով (**Ի յարկէ ի՞նչ սրբութեան ...**):

<sup>1</sup> Թց 9, 17-18

<sup>2</sup> Ես 52, 12

<sup>3</sup> Եզր 3, 11

<sup>4</sup> Հմմտ. Յս 6, 1-21

<sup>5</sup> Հմմտ. 2Թգ 6, 1-23

<sup>6</sup> Հմմտ. Նէմ 12, 27-43

<sup>7</sup> Հմմտ. Յդթ 15, 13-16, 24

<sup>8</sup> Հմմտ. Սղմ 119-134

<sup>9</sup> Հմմտ. Ղկս 19, 35-45

– Պատարգիչ քահանայի եւ սպասաւորների էջքը ժողովրդի մէջ եւ կրկին բարձրանալը խորան, որ խորհրդանշում է Քրիստոսի էջքը երկնքից եւ համբարձումը Հօր աջ կողմը, մինչ դպիրները եղանակում են **Բարեխօսութեամբ** աղօթքը:

– Աւետարանի թափօրը խունկով, մոմեղէններով ու քշոցներով, որ արտայայտում է Աստծոյ ժողովրդի ունեցած յարգանքը Աստծոյ **Խօսքի** նկատմամբ, մինչ դպիրները երգում են **Երեւոթեան օրհնութիւնը**:

– Ընծաների տեղափոխումը խորանի աջակողմեան տապանակից դէպի պատարագման սեղան, նոյնպէս խնկարկմամբ, մոմերով ու քշոցներով, որ արտայայտում է Աստծոյ ժողովրդի ունեցած հաւատքը Ամենասուրբ Հաղորդութեան մէջ Յիսուսի իրական ներկայութեան հանդէպ, մինչ հաւատացեալները ամփոփում են պաշտամունքի ոգիով, իսկ դպիրները երգում են **Երեւոթեան օրհնութիւնը**:

Գոհաբանական Պատարգի ծիսական արարողութիւնից դուրս, Եկեղեցին մեծ հանդիսաւորութեամբ կատարում է մի քանի ուրիշ թափօրներ.

– Յուղարկաւորութեան թափօրը, որով Եկեղեցին աքսորից դէպի հայրենիքի խաղաղութիւնն է առաքում իր անդամներից մէկին, դաւանելով ննջեցեալների յարութեան, դատաստանի եւ յաւիտենական կեանքի վերաբերեալ իր հաւատքը:

– Տէրունական մեծ տօների կապակցութեամբ կատարուող **Անդաստան** կոչուող թափօրները, որոնց ընթացքում Աստծոյ ժողովուրդը Տիրոջից խնդրում է օրհնել աշխարհի չորս կողմերը:

– Փափաքելի կը լինէր, որ առաւել լաւ կազմակերպուէին եւ բազմաթիւ հաւատացեալների ու եկեղեցականների մասնակցութեամբ մեծաշուք կատարուէին ուխտազնացութեան թափօրները դէպի Հայ Եկեղեցու համար կարեւոր սրբատեղիները, ինչպիսիք են Վաղարշապատի երեք սրբավայրերը (Մայր Տաճար, Սրբուհի Գայիանէ եւ Սրբուհի Հռիփսիմէ), Խոր Վիրապը, Օշականը, Գեղարդը, Տաթեւը, Գանձասարը, Հաղարծինն ու Հաղբատը, եւ այլն: Այս թափօրները կարող են ունենալ տարբեր իմաստ եւ նշանակութիւն. կարող են կազմակերպուել տուեալ Սրբի տօնի կապակցութեամբ, մեծարելու համար Աստծոյ Ծառային, բայց կարող են ունենալ նաեւ ապաշխարութեան, շնորհների հայցման կամ երախտագիտութեան բովանդակութիւն:

